ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 19 սեպտեմբերի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով քաղաքացի Ալիսա Գրիգորյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ալիսա Գրիգորյանը 2015թ. օգոստոսի 31-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի «հրապարակման պահից» դրույթը, և

ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 414[1]-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի «1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, եւ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է» դրույթը, այնքանով, որքանով այն բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ

պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչում հարգելի»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված դրույթները չեն ապահովում և պաշտպանում Սահմանադրությամբ սահմանված և երաշխավորված իր իրավունքները, այնքանով, որքանով որ վիճարկվող դրույթների և սահմանադրական դատարանի դիրքորոշումների վերլուծության պարագայում ստեղծվում է անորոշ /կամ տարաբնույթ մեկնաբանություններ առաջացնող/ իրավիճակ՝ դատական ակտի բողոքարկման ժամկետների առնչությամբ, ընձեռելով դատարաններին հայեցողական լիազորություն:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ.

Դիմումում բարձրացված խնդիրների և սահմանադրահակասելիության խնդրանքով՝ վկայակոչված հոդվածների առումով գործը քննության ընդունելու հարցի առնչությամբ, վկայակոչված հոդվածներից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-1062 որոշումը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ անհատական դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ.

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից ներկայացված հիմնավորումները հիմնականում վերաբերում են դատական ակտի բողոքարկման ժամկետների, ինչպես նաև բաց թողնված ժամկետների վերականգնմանը: Այս կապակցությամբ դիմողը ներկայացրել է մի շարք հիմնավորումներ, համաձայն որոնց՝

իրավական որոշակիության սկզբունքից ելնելով օրենքը պետք է ապահովի կանխատեսելիություն, լինի բավականաչափ հստակ՝ բացառելով դատարանների կամայականությունները:

Քաղաքացի Ալիսա Գրիգորյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի մասով առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ այդ առնչությամբ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 31-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի 3-րդ մասով, 69-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Ալիսա Գրիգորյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:

2. «Քաղաքացի Ալիսա Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

4. Քաղաքացի Ալիսա Գրիգորյանին ազատել պետական տուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝

19 սեպտեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/1-22